ՆԻՍ ԲԱՀԱՆԱՅ
ՁՈՒՐԱՅԵԱՆՑ: Վ-
ԱԽՃԱՆԵԱԼ Ի
1884 ԱՄԻ, 72 ԱՄԱՑ:

Ծանոթ. Այստեղ՝ եկեղեցու բակում կան նաև մի քանի հոգևորականների սալատապաններ, որոնց հիշատակագրերը հարկ չհամարվեց արտագրել:

ԿՈՒՐԹԱՆ

Գտնվում է Պըլըղ (Պալըղ) և Գառգառա ջուր գետակների միակցումից գոյացած լեզվակաձև հարթության վրա: Շրջանի հնագույն բնակավայրերից է: Գյուղամիջում կանգնած է IV դարի բազիլիկ եկեղեցին: Նմանատիպ մի կիսավեր եկեղեցի էլ կա Վարդաբլուր տանող ճանապարհին, իսկ Հնեվանի ձորում կան նաև բազմաթիվ բնական քարայրներ, որոնցից մի քանիսը վեր են ածվել մատուռ-ուխտատեղիների:

Արձանագրություններ ունեցող հուշարձանները հետևյալներն են.

Ա. *Գերեզմանատուն.* գտնվում է գյուղի հյուսիսային եզրին. կան մի մատուռի ավերակ ու բազմաթիվ կանգուն և ընկած խաչքարեր. վերջիններից ամենահինը 1086 թվից է:

Բ. *Խաչքարեր՝* 3 հատ, գտնվում են Հնեվանի ձորում, «միջի գոմեր» կոչված վայրում, Պըլըղ գետակի աջ ափին. դրանց մոտ կա մի ավերակ մատուռ, գետակի վրա՝ կամուրջի մնացորդներ: Խաչքարերից երկուսի վրա կան ընդարձակ արձանագրություններ. հինը՝ 1229 թվի:

Գ. *Մտի մատուռ.* գտնվում է Հնեվանի ձորի քարափի մեջ. բնական այր է եղել, որի առաջ պատ շարելով՝ դարձրել են ուխտատեղի: Ներսում ընկած է երեսպատման մի քար՝ շինարարական արձանագրությամբ: Հավանաբար սրա մասին է Լալայանը գրել, թե աղոթատեղի է «Դռան մոտ կայ հայերեն եղծուած արձանագրութիւն» (էջ 338):

995. ԽԱՉՔԱՐ. գյուղի գերեզմանատանը, կողքին պատվանդանն է, եղել է ճարտարապետորեն որմնաշարված և բարձր: Մնացել են արևմտյան կողմի երեսապատման մի քանի քարերը:

Խաչքարի չորս շրջանակներին.



[Ի] ՇԼԵ (1086) ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ, [Ի] ԹԱԳԱՎՈՐՈՒԹ-
Ե[Ա]Ն ԿՈՒՐԻԿԷԻ, ՀԱՐԱՋ[ԱՏ ԵՂԲ-
ԱՐ]Ք ՍԱՐԳԻՍՈ, [Դ]ԱՎԻԹՈ, ԳՈՐԳԻ ՆՈՐՈԳԷՑԱՔ Ջ[ԱՔ
ԳՈՐԳՍ՝ ԲԱՐԵԽՈՍ ՅՈԳՈՑ ՄԵՐՈՑ:

Հրատ. Ջալալյանց, Ա, 123, «Լուսա», 1897, 239, «Ազգ. հանդ.», VII-VIII, 339 «Լրաբեր», 1979, 9, 65, Շահինյան, ՀՄԿՀ, 38:

Ծանոթ. Վերևի աջ անկյան վրա տառերը ջարդված են, *ԵՂԲԱՐՔ* բառը վերականգնում ենք՝ տեղի չափը և վերջին տառը նկատի ունենալով: Ա. Շահինյանը բառը վերականգնել է *ՈՐԴԱՒՔ*: Ներքևի տողն ամբողջովին և նրա շարունակությունը ձախ շրջանակին գրված են գլխիվայր և շուռ տված գրերով:

Ս. Գորգ (Գեորգ) անունը վերաբերում է խաչքարի մոտի ավերակ մատուռին, որը նորոգել են երեք եղբայրները:

Այս և գերեզմանոցի մի խումբ խաչքարեր խնամքով պատվանդաններին է վերատեղադրել պատմաբան Էմիլ Այվազյանը:

996. ԽԱՉՔԱՐ. նույն գերեզմանատան մեջ, թիկունքին, 8 տող.

ԻԹՎ: ՈՂԵ: ԵՍ	Ի ԹՎ[ԻՆ] :ՈՂԵ: (1246), ԵՍ
ԱՃԱՏՈՐՍԱ	Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՏՈՒՐՍ[ԵՒ]Ա-
ՄՈՒՍԻՆԻՄ	ՄՈՒՍԻՆ ԻՄ,
ԳՆԵՑԻՄԱՐԿՈ	ԳՆԵՑԻ ՄԱՐԿՈ-
ՍՑԱՐՏԻՆԿԵՍ	ՍՈՅ ԱՐՏԻՆ ԿԵՍ[Ն],
ԿԱՆԿԵՑԻԽԱՉՍ	ԿԱՆԿ[Ն]ԵՑԻ ԽԱՅՉՍ
ԻՓՐԿՈԹԷՀՈՑ	Ի ՓՐԿՈՒԹԵ[ԱՆ] ՀՈԳ-
ՈՅԻՄՈՅ	ՈՅ ԻՄՈՅ:

Ծանոթ. *Արտ* բառը իմաստավորում է ինչպես ընդեղեն ցանած դաշտ, այնպես էլ վարելահող, մշակովի հող: Խաչքարը հանգստարանի կենտրոնում է, բազալտե անմշակ պատվանդանի վրա, վերին պռնկին 3 խաչիկներ կան, պայտաձև կամարի տակ՝ մեծ խաչը: Արձանագրությունը տողատված է հորիզոնական գծերով, որը մաշված ու դժվարընթեռնելի է:

997. ԽԱՉՔԱՐ. նույն տեղում, 4 տող.

ԻԹՎՀՉԼԳ ԿԱՆԳՆԵՑԱ
ՀԱԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԵՎԱՀԱՄ
ԵԱՄՈՒԱՆՈՒԻՐՈՍՈՓԷԵՒՋ
ԱԿԱՑԻԻՐՈՑԱՄԷՆ

Ի ԹՎ[ԻՆ] :ՉԼԳ: (1284) ԿԱՆԳՆԵՑԱ[Ի ԽԱ]-
ՉՍ Ի ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԵ[ԱՆ] ՎԱՐՀԱՄ[Ա]
ԵՒ ԱՄՈՒՍՆՈ ԻՒՐՈ ՍՈՓԷ ԵՒ Ջ[ԱՒ]-
ԱԿԱՑ ԻՒՐՈՑ: ԱՄԷՆ:

Հրատ. Ջալալյանց, Ա, 124, «Ազգ. հանդ.», VII-VIII, 328, «Լրաբեր», 1978, 4, 76:

Ծանոթ. Լալայանը բաց է թողել թիվը:

998. ԽԱՉՔԱՐ. փոքր, կանգնած է նույն գերեզմանատան մեջ, ներքևում, 2 տող.

✝ ՅՇԱՄԿԷՍԲԽԱՉ	ՅԻՇԱՏԱԿ է ՍԲ ԽԱՉՍ
ԷԼԱՇԻՆԵՎԱՆԱՇԻՆ	ԷԼԱՉԻՆ ԵՎ ՃԱՆԱՇԻՆ:

Ծանոթ. Խաչակոթունից ձգվող խաչերը ձեռքերի մեջ են, իսկ թիկունքին կա կլոր բարձրաքանդակ:

Առաջին անունը կարելի է կարդալ նաև ԷԼԱՂԻՆ կամ ԷԼԱՇԻՆ, երկրորդը՝ ՃԱՆԱՂԻՆ (Խմբ.):

999. ԽԱՉՔԱՐԵՐ. Հնեվանի ձորում, Պըլրդ գետակի աջ ափին, հյուսիսայինի քիվին 1 տող, թիկունքին 16.

✝ ԻԹՎԱԿԱՆՈ-	Ի ԹՎԱԿԱՆՈՒ
ՌԵՍՀԱՅՈՑԻՈՀԸ	ԹԵ|ԱՆ|Ս ՀԱՅՈՑ Ի ՈՀԸ (1229),
ԵՍՈՒՄԵԿՍՂԻՆ	ԵՍ ՈՒՄԵԿՍ, ՇԻՆ-
ԵՑԻՋՄԱՄՈՒՌՆ	ԵՑԻ ՋՄԱՏՈՒՌՆ
ԵԻԿԱՆԿՆԵՑԻՋ	ԵՒ ԿԱՆԿՆԵՑԻ Ջ-
ԽԱՉՍ ԵԻՀԱՍՄԱ	ԽԱՉՍ, ԵՒ ՀԱՍՏԱ-
ՄԵՑԻՋԲԵՄՄԵԻԲԵ	ՏԵՑԻ ՋԲԵՄՄ ԵՒ ԲԵ-
ՐԻՋՋՈՒՐՍԻՅԻՄՀ	ՐԻ ՋՋՈՒՐՍ Ի ՅԻՄ Հ-
ԱԼԱԼՎԱՍՏԱԿԱՆ	ԱԼԱԼ ՎԱՍՏԱԿԱՆ-
ԱՑՎՆՅԻՂԱԿՀԱԻՐԻՄ	ԱՑ ՎԱՍ|Ն ՅԻՇԱՏԱԿ ՀԱՒՐ ԻՄ
ՄԽԻԹԱՐԱՅՈՐՊԱՊ	ՄԽԻԹԱՐԱՅ, ՈՐ ՊԱՊ
ԿՈՉԻԽԱԻՈՒԹԻԿՆՈՋԻ	ԿՈՉԻ, ԽԱՒՈՒԹԻ ԿՆՈՋ Ի-
ՄՈՐԿՈՉԻՄԻՐԱՄԱՅՐ	Մ, ՈՐ ԿՈՉԻ ՏԻՐԱՄԱՅՐ:
ՈՐՔԿԱՐԴԱՅՔԵԻԵՐԿՐ	ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ ԵՒ ԵՐԿՐ-
ՊԱԳԵՔՅԻՂԵՑԵՔԻ	ՊԱԳԵՔ ՅԻՇԵՑԵՔ Ի
ՍԲՅԱՂԱՒԹՍՁԵՐ	ՍԲ ՅԱՂԱՒԹՍ ՁԵՐ:

Հրատ. Ջալալյանց, Ա, 124, «Ազգ. հանդ.», VII-VIII, 338, Շահինյան.ՀՄԿՀ, 53-54:

Ծանոթ. Արձանագրության մեջ հիշված մատուռը գտնվում է խաչքարի մոտ: Փոքրիկ թաղածածկ շինություն է եղել: Այժմ ավերակ վիճակում է: Մատուռից ոչ հեռու գտնվում է նաև մի կիսավեր կամուրջ:

Քիվի կիսաեղծ հիշատակությունը հրատարակիչները բաց են թողել, որը վերաբերում է վարպետին: Գուգարքում բեմեր են կոչվում պատվանդանների վրա իբրև սրբատեղի կանգնեցված խաչքարերը (Սանահին, Աքորի), բայց ոչ գերեզմաններին հովանի դրվածները: Ումեկի բերած ջուրը՝ սառնորակ աղբյուրը գործում է մինչ այժմ:

1000. ԽԱՉՔԱՐ. Նախորդից հարավ, պատվանդանի խորանների գլխին՝ 1, թիկունքին՝ 11 տող.



ԹՎ[ԻՆ] ՉԹ (1260):
ԵՍ ԱՆԱՐԺԱՆ ԾԱՌԱ ԱՅ
ՊԵՏՐՈՍ, ՈՐԴԻ ԲՌՆԱՒՈՐԻ,
ՆՈՐ ՇԻՆԵՑԻ ԶԿԱՐՄՈՒՑ-
Ս ԵՒ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի Բ-
ԱՐԵԽԱՒՍՈՒԹԵ[ԱՆ] ԻՆՁ ԵՒ
ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ, ՈՐ ԿԱՐԴ-
ԵՔ ՅԵՒ ԷՐԿԻՐՊԱԳԱ-
ՆԷՔ [Յ]ԻՇԵՑԷՔ Ի ԱՂԱՒ-
ԹՍ ՉԵՐ ԵՒ ԱՕ ՉՉԵՉ [Յ]ԻՇԷ:
ԱՄԷՆ:

Հրատ. Ջալալյանց, Ա, 124, «Ազգ. հանդ.», VII-VIII, 338, ԿՏ, 82, 147, Շահինյան, ՀՄԿՀ, 53:

Ծանոթ. Թվականը երկմտելի է, գրերը հազիվ են նշմարվում, որը չունեն նախորդ հրատարակիչները: Կոստանյանը տեղավորել է 1240 թվականի տակ, երևի նկատի ունենալով Բռնավոր անունը, որը այդ թվին հիշատակված է Խծկոնքի արձանագրության մեջ: ***Նոր շինեցի*** արտահայտությունից պարզ է, որ հին կամուրջը ավերվել է և նորովի վերաշինվել:

Ա. Շահինյանը չնկատելով հազիվ նշմարվող թվատառերը, զարմանք է հայտնում, թե ինչի հիման վրա է Ե. Լալայանը արձանագրությունը թվագրել ՈՉԹ (1240), որից և օգտվել է Կ. Կոստանյանը: Վերջին տողում ՉՉԵՉ բառի Չ տառատեղում մենք կարդում ենք Մ (ՉՄԵՉ), ինչպես երևում է գրչագրում, սակայն բովանդակային առումով ճիշտ կլիներ՝ ՉՉԵՉ: Իրականությունն այն է, որ Չ տառից հետո փակագիր է՝ Ա տառի աջ ուղղահայաց ստեղնի վերևում Ն է, իսկ ձախ ստեղնի վերևում՝ Մ (խմբ.):

1001. ՄԱՏՈՒՌ. քարայր-աղոթարանի մեջ ընկած երեսապատման քարի վրա, 5 տող.



ԵՍ ԾԵՐՈՒՆ
ՇԻՆԵՑԻՉԷ
ԿԵՂԵՑԻՍ Ա-
ՐԴ ԱՂԱՉԵՄ [ՅԻՇԵԼ Ի ՏՐ]:
ՄՈՒՍԱԷԼՍ ԳՐԻՉ Յ[ԻՇԵՑԷՔ]:

Ծանոթ. Եկեղեցի ասածը, եթե արձանագրության գտնվելու վայրից դատենք, կիսաժայռափոր փոքրիկ շինություն է, տեղացիներն այն անվանում են «Մութ մատուռ»: Արձանագրության վերջին տողի տառերը տարբերվում են մնացածից, ուր հիշատակված է գրչի անունը: Չորրորդ տողը կարելի է լրացնել նաև ԱՂԱՉԵՄ ՅԻՇԵԼ ՉԻՍ:

1002. ԽԱՉՔԱՐ. գերեզմանոցում, քիվի և խորանի միջի գոտուն, 1 տող.

ՅՀՆՍ ԿԶՄՈՂ Յ|Ո|Հ|Ա|Ն|Է|Ս Կ|Ա|ԶՄՈՂ:

ՀՊՎԱ

Ծանոթ. Քիվին նշմարվում են տառահետքեր, բայց լուսանկարից չի ընթերցվում: Վարպետի անունը ևս կասկածելի է:

Խաչքարն անշուք է, յուրահատուկ ԺԶ-ԺԷ դդ.:

1003. ԽԱՉՔԱՐ. գերեզմանոցում, քիվին, 1 տող (XIII դ.).

ՍԲԽԱՉՍ ՈՂՈՐՄԻԹԱԳՈՐԿԱՆ

ՍԲ ԽԱՉՍ ՈՂՈՐՄԻ ԹԱԳՈՐԿԱՆ:

1004. ԽԱՉՔԱՐ. գերեզմանոցում, քիվին, 2 տող.

ԲԵԿԶԱ(Ն)Ս ԿԱՆԳՆԵ...
ԽԱՉՍ ԽԱՆ . . . .

ՀՊՎԱ

1005. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գյուղամիջյան Ս. Աստվածածին եկեղեցու պատի տակ, 4 տող.

ԱՅՍԷ ՏԱՊԱՆՆ ԱՅՍ է ՏԱՊԱՆՆ
ՊԱՐԱՊՔՈԽՎԻ ՊԱՐԱՊ ՔՈԽՎԻ,
ԳՈՒՂԻՀԻՄՆԱ ԳՈՒՂԻ ՀԻՄՆԱ-
ԴՐԻ 1722 ԴՐԻ: 1722:

ՀՊՎԱ

Ծանոթ. Գյուղը բնակեցված է եղել դեռևս մ.թ.ա. IV հազ., սակայն լքվել է XVII դ. թուրքական ցեղերի վերաբնակեցման հետևանքով, բայց վերստին հայերով բնակեցվել է ԺԸ դ. սկզբում:

1006. ՄԵՆՀԻՐԱՋԵՎ ԿՈԹՈՂ. գյուղի մշակույթի տան բակում, զորավոր Անդրանիկի գծանկարի տակ.

ԸՆՁՅՈՒՂՎԻ ՊԻՏԻ ՈԳԻՆ ՔՈ ՄԻ ՕՐ
Ի ՎԵՐ ԲԻԲԼԻԱԿԱՆ ԱՐԱՐԱՏՆ ԱՐԾԱԹ,
ՈՐ ԻՋՆԻ ՈՐՊԵՍ ՆՈՐՕՐՅԱ ՄԻ ՆՈՅ,
ԵՎ ՇՐՋԻ ՎԱՆԻՑ,ՄՈՒՇԻՑ ՄԻՆՉ ԱՐՑԱԽ:

Ծանոթ. Հուշարձանը կառուցվել է 1990 թ. գյուղացիների հանգանակությամբ (քանդակագործ Արա Մկրտումյան, ճարտարապետ Դավիթ Խարազյան): Այն վերհուշ է 1918 թ. մայիսյան իրադարձություններին, երբ Անդրանիկը իր զորախմբով օգնության է գալիս կուրթանեցիներին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԱՐԴ ՉԿԱ

1007. Կուրթան և Վարդաբլուր գյուղերի միջև.

Ի ՇԼ (1081) թուականութեան Հայոց ես կիւրիկե շինեցի...

Հրատ. Ջալալյանց, Ա, 122, «Ազգ. հանդ.», VII-VIII, 354, Ոսկյան, Գվ. 43:

Ծանոթ. Այս արձանագրությունը մասամբ նմանվում է Կյուրիկեի 1086 թ. արձանագրությանը: Սակայն ըստ Լալայանցի, այն փորագրված է եղել մատուռի պատին: Ջալալյանցը վկայում է նաև գավթի գոյության փաստը: Նման նկարագրով եկեղեցական շենք Կուրթանի կամ Վարդաբլուրի շրջակայքում գոյություն չունի: Ըստ ամենայնի, շփոթմունք է:

ԿՈՂԵՍ

Գյուղամիջում, աղբյուրի մոտ գտնվում է հին գերեզմանատունը: Այդտեղ է նաև Տուտիկ իշխանի տոհմական դամբարանը: Այն եղել է գետնահարկ և թաղածածկ, այժմ չնչին հետքերն են մնացել:

Դամբարանի գլխին՝ արևելքից, կանգնած են իրար կից երեք գեղաքանդակ խաչքարեր, ճարտարապետորեն ձևավորված ընդհանուր պատվանդանի վրա. խաչքարերից մեջտեղինը ավելի մեծ է, իսկ մյուսների խաչից ներքև պատկերված են հեծյալ ռազմիկներ, ձեռքերին երկար նիզակներ և սպառազեն, ձիերը քառատրոփ վազքի դիրքով են:

Ընդհանուր պատվանդանի արևմտյան երեսով գրված է արձանագրություն:

Դամբարանի շուրջ կան այլ հասարակ խաչքարեր և տապանաքարեր:

1008. Երեք խաչքարեր. պատվանդանին, 4 տող.



ԿԱՄԱՒ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ ԵՍ՝ ՏՈՒՏԻԿՍ ԵՒ ՄԱՅՐ ԻՄ ԹԱՄԱՐ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԴԵԴԵԿԱ, ԿԱՆԳՆԵՑԱՔ ՁԵՐՐՈՐԴՈՒԹԻ[ՒՆ], ՎԱՍՆ ՍԱՍՆԱՒԻՆ ԵՒ ՔԱՒԹԱՐԱ, ԵՎ ՆՈՐԱ-ԴԻՆԻՆ, Ո[Ր]Դ-Ք ԱՆՀԵՏ ԿՈՐԵՆ Ի ՁԵՌՍ ԱՆԱՒՐԻՆԱՑ ԵՒ ՍՈՒԳ ՄԵԾ ԵՒ ԱՆՄԽԻԹԱՐ ԹՈՂԻՆ ՁՄԵ[Ձ]: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՍ ԵՒ ՁԾՆՈՂՍՆ ՄԵՐ: ԱՄԷՆ: Ի ԹՈՒ[ԻՍ] :ՈՂ: (1241):

Հրատ. Ջալալյանց, Ա, 127, «Ազգ. հանդ.», VII-VIII, 342, ՎՏ, 83, Շահինյան,ՀՄԿՀ, 43:

Ծանոթ. Երրորդությունը այս դեպքում խաչքարերի խմբի անվանումն է: Այս հուշարձանը կանգնեցվել է անօրենների (թաթարների) ձեռքով նահատակված հարազատների հիշատակին և ակներևաբար այս առիթով այստեղ հիմնվել է տոհմական դամբարան: Տուտիկն ու իր կին Դետիկը նվիրատվություն են արել Հովհաննավանքին, և պատարագ ստացել (Հովհաննավանք, արձ. 43):